ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«12» դեկտեմբերի 2019 թվականի N: 335 ք.Գյումրի

ՄԱՐԻԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասի, 163-րդ հոդվածի, 167-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Մարիամ Պետրոսյանի 2019 թվականի նոյեմբերի 27-ի և դեկտեմբերի 3-ի դիմումները.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Վարդան Գրիգորյանի օգնական Մարիամ Պետրոսյանին տրամադրել ամենամյա նվազագույն արձակուրդից 7 աշխատանքային օր և 4 աշխատանքային օր ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 2019 թվականի դեկտեմբերի 26-ից մինչև 2020 թվականի հունվարի 17-ը ներառյալ:
2. Հիմնական արձակուրդային վճարից բացի վճարել լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:
3. Ամենամյա նվազագույն արձակուրդից մնացած մասը՝ 13 աշխատանքային օր, տեղափոխել և տրամադրել 2020 թվականի ընթացքում:

Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է